Հաստատված է	
Հաստատման ամսաթիվ	
Հաստատման համարը	

«ՍՈՎԹ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ

ՈՐԱԿԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Նախագիծը	Անուն/Ազգանուն	Պաշտոն	Ամսաթիվ	Ստորագրություն
Կազմեց	Ա. Գևորգյան	«Սիգնում» ՍՊԸ	22.08.2025թ	
Ստուգեց	Հ. Մկրտումյան	Զարգացման տնօրեն		
Հաստատեց	Տ. Կարապետյան	Տնօրեն		

ՈՐԱԿԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Կորպորատիվ պատասխանատվություն

«ՍՈՎԹ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ- ում մենք ձգտում ենք պահպանել որակի ամենաբարձր չափանիշները մեր գործունեության բոլոր ասպեկտներում: Որակի նկատմամբ մեր հանձնառությունը հիմնարար է մեր առաքելության համար:

«ՍՈՎԹ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊ Ընկերության որակի քաղաքականությունը արտացոլում է Ընկերության առաքելությունը, տեսլականն ու արժեքները:

«ՍՈՎԹ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊ Ընկերությունը պարտավորվում է բավարարել ԻՍՕ9001, ԻՍՕ 14001:2015, ԻՍՕ 45001:2018 ստանդարտների և կիրառելի օրենսդրական պահանջները:

«ՍՈՎԹ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊ Ընկերությունը և ղեկավար աշխատակազմը գիտակցում է սույն քաղաքականությամբ սահմանված կետերի կարևորությունը և պարտավորվում են այն իրականացնել Ընկերության գործունեության ողջ կյանքի ընթացքում և մակարդակներում:

« ՍՈՎԹ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ Բարձրագույն ղեկավարությունը ստանձնում է պատասխանատվություն Որակի կառավարման համակարգի արդյունավետության, ռիսկերի կառավարման և շարունակական բարելավման ապահովման համար՝ տրամադրելով բավարար ռեսուրսներ և հետադարձ կապ բոլոր մակարդակներում:

Ընդհանուր դրույթներ

Սույն քաղաքականությունը Ընկերության կողմից հրապարակվող պաշտոնական փաստաթուղթ է և հասանելի է Ընկերության բոլոր շահագրգիռ կողմերի համար:

Ընկերության բոլոր գործընթացները, այդ թվում նաև քաղաքականությամբ սահմանված նպատակների իրականացումը հիմնված են ռիսկերի և հնարավորությունների գնահատման, ներքին աուդիտի և ղեկավար վերլուծության արդյունքների հիման վրա:

Ընկերության կողմից սահմանված նպատակները ձևավորվում են կատարողականության հիմնական ցուցիչներով: Վերջիններս պարբերաբար վերանայվում են ղեկավարության կողմից՝ ապահովելու դրանց համապատասխանությունը Ընկերության ռազմավարությանը:

Ընկերության բոլոր գործողությունները իրականացվում են պլանավորում,ներդրում, ստուգում իրականացում սկզբունքով:

Քաղաքականության վերահսկումը , վերանայումը, արխիվացումը իրականացվում է համաձայն Ընկերության «Փաստաթղթերի կառավարման Ընթացակարգի» և ապահովում է տեղեկատվության արդիականությունն ու հասանելիությունը բոլոր շահագրգիռ կողմերի համար:

Տեսլական

Լինել տնտեսական ապրանքների ամբողջական փաթեթ առաջարկող ՀՀ լավագույն ընկերությունը՝ առանձնանալով որակյալ և միջազգային ստանդարտներին համապատասխան արտադրանքներով, անընդհատ զարգանալ և դառնալ հայկական արտադրանքի որակի

չափանիշ:

Առաքելություն

Հեշտացնել սպառողի կենցաղը և բավարարել մարդկանց կարիքները՝ առաջարկելով բարձրորակ, ոլորտին առնչվող միջազգային ստանդարտներին համապատասխան տնտեսական ապրանքներ:

Որակ

- Մենք որդեգրել ենք որակի կառավարման կանխարգելիչ մոտեցում, այն է՝ բացահայտել և կանխարգելել որակին առնչվող հնարավոր ռիսկերը, նախքան դրանց առաջանալը՝ ապահովելով արտադրանքի հուսալիությունն ու անվտանգությունը:
- Մենք վերահսկում և բարելավում ենք արտադրության ողջ գործընթացը՝ յուրաքանչյուր փուլում անհամապատասխանությունները նվազագույնի հասցնելու և արտադրանքի ամբողջականությունը ապահովելու համար:
- Որակի վերահսկման համար մենք սահմանում ենք որակի հստակ նպատակներ,կատարողականի հիմնական ցուցիչներ՝ գնահատելու Ընկերության կատարողականությունը՝ որակի նպատակներին համապատասխան
- Մշտապես համագործակցել մատակարարների հետ ստանալու մեր արտադրանքի պահանջներին համապատասխան որակյալ նյութ, որը պետք է անվտանգ լինի նաև շրջակա միջավայրի համար:
- Վերապատրաստել, արհեստավարժել Ընկերության ողջ աշխատակազմին առաջնորդվելու Ընկերության արժեքային համակարգով, որն ուղղված է ապահովելու արտադրական գործընթացի և արտադրանքի որակը:

Հաճախորդների բավարարվածություն

Հաճախորդների ակնկալիքները ապահովելու համար մենք պարտավորվում ենք.

- Մշտապես առաջարկել հաճախորդի սպասումները գերազանցող արտադրատեսակներ
- Ապահովել որակի համապատասխան ստանդարտների պահանջները
- Բացահայտել հաճախորդների կարիքները
- Տալ և ստանալ հետադարձ կապ

Կայունություն

Կայուն զարգացման համատեքստը պահպանելու համար ընկերությունը պարտավորվում է.

- Ապահովել բիզնեսի կայուն առաջընթացը շարունակական բարելավման սկզբունքով
- Բացահայտել, կանխարգելել և կառավարել շրջակա միջավայրի վրա ազդեցության ռիսկերը Ընկերության գործունեության ողջ ցիկլի ընթացքում
- Նվազեցնել ռեսուրսների կիրառումը, այնտեղ, որտեղ հնարավոր է օգտագործել վերամշակվող հումք և վերամշակել գործունեության ընթացքում առաջացող թափոնները:
- Նպաստել այն համայնքների սոցիալ տնտեսական զարգացմանը, որտեղ որ մենք

ծավալում ենք մեր բուն գործունեությունը

- Ապահովել աշխատակիցների առողջության և անվտանգության պաշտպանությունը՝ կանխելով վտանգները և ռիսկերը՝ հիմնվելով ԻՍՕ 45001-ի վրա:

Հաշվետվողականություն և թափանցիկություն

- Խթանել բաց հաղորդակցությունը և թափանցիկությունը կազմակերպության ներսում, որը հնարավորություն կտա
  - բացահայտելու որակին առնչվող խնդիրները արտադրության գործունեության ընթացքում
  - բացահայտելու աշխատակիցների պոտենցիալ ներուժը մասնագիտական զարգացման և բիզնեսի բարելավման նպատակներով
- Խթանել բաց հաղորդակցությունը և թափանցիկությունը հաճախորդների, մատակարարների և շահագրգիռ կողմերի հետ
- Տալ և ստանալ հետադարձ կապ՝ լուծելով շահագրգիռ կողմերի մտահոգությունները

Որակի քաղաքականության իրականացման միջոցով «ՍՈՎԹ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊ Ընկերությունը ցույց է տալիս իր հանձնառությունը տեսլականի և առաքելության իրականացման ուղղությամբ, որը կապահովի բարձրորակ արտադրանք և Ընկերությունը կդառնա հայկական արտադրանքի որակի չափանիշ: